

ԳԵՐԻԿԵԻ ՓՈՐՁ

Մթնոլորտային ճնշման գոյությունն ապացույցած գիտնականների շարքում պատվավոր տեղ ունի գերմանացի ֆիզիկոս Օտտո ֆոն Գերիկեն (1602-1686): Նա սերում է մագդեբուրգյան ազնվական ընտանիքից: Ուսումնասիրել է իրավաբանություն Յենայում, ավելի ուշ՝ Լայպցենի և եվրոպական այլ համալսարաններում սովորել է ռազմական ճարտարագիտություն, մաթեմատիկա, մեխանիկա և շինարարական գործ: 1641թ. հայտնագործել է օդային պոմպը և կատարելագործելով այն՝ կատարել զանազան փորձեր:

1654թ., երբ Մագդեբուրգ քաղաքի քաղաքագլուխն էր, նա բազմաթիվ ականատեսների ներկայությամբ ցույցադրել է մթնոլորտային ճնշման գոյությունը՝ նշանավոր մագդեբուրգյան կիսագնդերով: Գերիկեն իր պատրաստած օդահան պոմպով օդը հանել է իրար կիպ կպած, բայց միմյանց չամրացված կիսագնդերից: Մթնոլորտային ճնշումը կիսագնդերն այնքան ուժեղ է իրար սեղմել, որ դրանք միմյանցից բաժանել չեն կարողացել անգամ հակառակ ուղղությամբ ձգող 4-ական զույգ ձիերը:



Օտտո Գերիկեն ապացույցել է օդի առաձգականությունը, որոշել խտությունը, պարզել, որ օդը ձայնի հաղորդիչ է, և որ դատարկության մեջ ձայնը տարածվել չի կարող:

Նա է պատրաստել առաջին ջրային ծանրաչափը և դրա օգնությամբ կանխատեսել եղանակը, հայտնագործել օդային ջերմաչափը, ճնշաչափը և այլ սարքեր: Գերիկեն հայտնագործություններ է կատարել ֆիզիկայի տարբեր բնագավառներում:

ԻՆՉՈՒ՞ Է ԶԱՅԼԵԼԸ ԴԺՎԱՐ ԿՊՉՈՒՆ (ԽՈՆԱԿ) ԳԵՏՆԻ ՎՐԱՅՈՎ

Մթնոլորտային ճնշման ազդեցությունը մարդն զգում է խոնավ (կաչուն) գետնի վրայով քայլելու ժամանակ: Ոտքը բարձրացնելիս նրա տակ՝ ներքանի և գետնի միջև, առաջանում է շատ փոքր ճնշմամբ «նոսրացված տարածություն»: Արտաքին (մթնոլորտային) ճնշման ավելցուկը խոչընդոտում է ոտքը բարձրացնելուն, ընդ որում՝ ճնշման ուժը հասնում է մինչև 1000 Ն-ի: